

**ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ՈՐՈՇՈՒՄ N 39/3**

ք.Երևան

6 հուլիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ «ԿԱՆԱԶ ՈՒՂԻ» ՍՊԸ դիմում-բողոքը՝

**ՊԱՐԶԵՑ**

**1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները**

«ԿԱՆԱԶ ՈՒՂԻ» ՍՊԸ տնօրենը հայտնում է, որ 2017թ. մայիսի 25-ից մինչև 2018թ. հունիսի 15-ը գտնվել է կալանքի տակ: Ընդ որում, այդ ընթացքում ընկերության բոլոր փաստաթղթերը և կնիքը գտնվել են քննիչի մոտ, ինչը հավաստվում է նաև ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության կողմից կայացված համապատասխան որոշումներով: Նշվածի հետևանքով նա չի կարողացել սահմանված ժամկետում ներկայացնել 2018թ. շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը:

Ելնելով վերոգրյալից՝ բողոքաբերը խնդրում է հնարավորություն ընձեռել ներկայացնել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը:

**2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

«ԿԱՆԱԶ ՈՒՂԻ» ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում պետական գրանցում է ստացել 18.09.2008թ. և 2017թ. ընթացքում համարվել է շրջանառության հարկ վճարող:

«ԿԱՆԱԶ ՈՒՂԻ» ՍՊԸ-ի տնօրենը կալանքի տակ գտնվելու հետևանքով չի կարողացել սահմանված ժամկետում ներկայացնել 2018թ. շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը:

**3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ**

ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով հստակ սահմանված է, որ շրջանառության հարկ վճարողներ են համարվում (անկախ բացառապես արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակներ իրականացնելու հանգամանքից) նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանը բավարարող ռեգիդենտ առևտրային կազմակերպությունները, անհաղ ձեռնարկատերերը և նույնիսկ (բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի) տվյալ հարկային տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե

հարկ վճարողը մինչև տվյալ հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատված ձևով՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ շրջանառության հարկ վճարող կարող են համարվել այն ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը և նոտարը, որոնց նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը չի գերազանցել 58.35 միլիոն դրամը:

Միևնույն ժամանակ, Օրենսգրքի 455-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենսգրքի 59-րդ և 254-րդ հոդվածներով սահմանված՝ նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 58.35 միլիոն դրամի շեմը, ինչպես նաև Օրենսգրքի 255-րդ հոդվածով սահմանված՝ ընթացիկ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 58.35 միլիոն դրամի շեմը գործում է 2019 թվականի հունվարի 1-ից, իսկ 2018 թվականի ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության ԱԱՀ-ի շեմը սահմանվում է 115 միլիոն դրամ:

Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված են այն վավերապայմանները, որոնց առկայության պայմաններում տնտեսվարող սուբյեկտը չի կարող համարվել շրջանառության հարկ վճարող:

ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տվյալների համաձայն «ԿԱՆԱԶ ՈՒՂԻ» ՍՊԸ-ն բավարարում է Օրենսգրքով նախատեսված բոլոր պահանջներին 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու համար:

Քննարկվող դեպքում «ԿԱՆԱԶ ՈՒՂԻ» ՍՊԸ-ի տնօրենը 2017թ. մայիսի 25-ից մինչև 2018թ. հունիսի 15-ը կալանքի տակ գտնվելու հետևանքով չի կարողացել սահմանված ժամկետում ներկայացնել 2018թ. շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը (գործում առկա են համապատասխան ապացույցները):

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է հնարավորություն ընձեռել «ԿԱՆԱԶ ՈՒՂԻ» ՍՊԸ-ի տնօրենին ներկայացնել հայտարարություն՝ 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու համար:

#### **4. Եզրափակիչ մաս**

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

### **ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. «ԿԱՆԱԶ ՈՒՂԻ» ՍՊԸ-ի դիմում-բողոքը բավարարել:
2. «ԿԱՆԱԶ ՈՒՂԻ» ՍՊԸ տնօրենի կողմից շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացվելու դեպքում 2018թ. համարել շրջանառության հարկ վճարող:

**Հանձնաժողովի նախագահ՝**



**Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ**